Ժ. ՏԱՐԻ 2713 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 10 ՄԵՀԵԿԱՆ 4385 — 16 ՓԵՏՐՈՒԱՐ 1893 — 12 ՇԱՊԱՆ 1310 — ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌وك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դրամական արժողութիւն	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան Բաժնեգին	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր թղթի վրայ մասնաւոր տպագրութեամբ Տարեկան Օտ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծանրագին դիրքեր Դրուշ	50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ես չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 16/28 ՓԵՏՐՈՒԱՐ, 1893

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.—Պահպանողական կուսակցութիւնն այս օրերս նոր ոյժ մը ստացաւ Երկրագործական Համաժողովոյ գումարումով. զի երկրագործք, այսինքն՝ ագարակներ և արտեր բանեցնող մեծ կալուածատերք, մաքսապաշտ դրութիւն կը պահանջեն, գերմանական երկրագործութեան պաշտպանութիւն օտարաց հողային բերքերուն դէմ, և յայտնի է թէ պահպանողական կուսակցութիւնն եւս միշտ այս դրութեան կողմն հակած է։ Ցիշեալ համաժողովոյ մէջ գովեստիւք յիշուեցաւ Պիզմարք իշխանի անունն, որ օտարամուտ արմտեաց վրայ ծանր մաքսեր դրած էր, և ինքն եւս մեծ ագարակատէր մ'ըլլալով, գիտցած էր ագարակատէրներն իրեն երախտապարտ թողուլ։ Մինչ հողագործք իրենց մէջ խորհրդարանական կազմակերպութիւն մը հաստատելով կը յուսան պաշտպանել իրենց շահերը, Ռայխսթակի պահպանողական կուսակցութեան պետերն ալ ուրախ են որ այս երկրագործական համաժողով կը զօրացնէ Ռայխսթակի պահպանողական կուսակցութեան դիրքն։ Այս պարագայից մէջ, Կայսրն իւր համակրութեան նոր ապացոյցը տալով Քարլսրիվի նախարարապետին, նաեւ մաքսային խնդրոյ մէջ անոր բռնած ընթացքին նկատմամբ իւր համամտութիւնն յայտնած եղաւ։ Գերման մամուլն հետաքրքիր է իմանալու թէ նորակազմ «Երկրագործական Դաշնակցութիւնը» մինչեւ ո՛ւր պիտի տանի իւր խորհրդարանական գործողութիւն ի պաշտպանութիւն հողագործական շահուց։ Եթէ Պահպանողականք եւս պայման դնեն մաքսապաշտ դրութեան վերահաստատումն՝ առաջարկեալ զինուորական օրէնքին ընդունելութեան համար, գործը բաւական մեծ կարեւորութիւն ստացած կ'ըլլայ խորհրդարանական տեսակէտով։

ԲԱՆԱՄԻՆՕՆ նոր նմանութիւն մ'ունեցաւ մեծ Բանամային։ Գլխաւոր ամբաստանեալներէն մին, Պ. տի Մէրպի երեսփոխանը, բանտի մէջ մեռաւ, յուսացուած կամ վախցուած կարեւոր յայտնութիւնները չբերած դատարանի առջեւ։ Մահն յանկարծակի եղաւ գրէթէ։ ամբաստանեալը շատ բաներ գիտէր։ Ցիշդ այն պահուն մեռաւ երբ ի դատարան պիտի երթար։ Այս ամէն պարագայներն ակնարկելով, հակառակորդ տարերքը չեն վարանիր Պառոն տը Ռէյնաքի մահուան նմանցնել այս իտալացի երեսփոխանին մահը։ Բայց միւս կողմէ կ'ըսուի թէ Պ. տի Մէրպի բաւական հոդեվարքը քաշեց, և թէ երկար ժամանակէ հետէ սիրտի հիւանդութենէ կը նեղուի եղեր։ Հիւանդութեան սաստկագոյն վայրկենին մէջ խեղճ երեսփոխանն ինքզինք կորսնցնելով, պառաւեր է թէ բանտի մէջ մեռնել չեմ ուզեր, տուն տարէք զիս։ Զմոռնանք սակայն թէ՝ երէկ եկած հեռագրոյ մը նայելով՝ Երեսփ. ժողովը մերժած է նոր առաջարկ մը որ մատուցուած էր՝ Պանքաներու գործին վերաբերեալ յայտնութեանց քննութիւնը խորհրդարանական մարմնոյ մը յանձնելու համար։ Ուրեմն, ֆրանսական Խորհրդարանի ընթացքին հակառակ, իտալեան Խորհրդարանը վստահ է թէ նախարարութիւնը պիտի կատարէ իւր պարտականութիւնն։

ՑՈՒՆԱՍՏԱՆ.—Ի Զանզիբ երկրաշարժները դեռ չվերջացան։ Օր մը սաստիկ, օր մը մեղմ, բայց կը շարունակեն։ Թէեւ վերջերս ծանր կործանում մը տեղի չունեցաւ, բայց այն խեղճ բնակիչք որք պարտաւորեալ են ընակիլ կիսակործան և անապահով տուներու մէջ, շարունակ վտանգի կամ գէմահ ու գողի ենթակայ են։ Միւս կողմէ, մարդասիրութիւնն ալ իւր գովելի գործ յառաջ կը տանի ամեն կողմ, և յոյն գաղթականութիւնք եւ օտար հասարակութիւնք նուէրներ կը հայցեն Աթէնքի նպաստամատոյց յանձնաժողովոյն, որուն կը նախագահէ Եորկիոս Թոգաւորն ինք։

—Թեսալիոյ մէջ ալ դաշտային մուկերու խուռներամ բազմութիւնը նորէն երեւան ելաւ, նաեւ սահմանակից Թիթոդիս գաւառին մէջ։ Կը յուսացուէր որ ձմրան սաստիկ ցուրտն և առատ անձրեւները փճացուցած ըլլան զանոնք, բայց անոնք լեռներու մէջ ապաստան գտեր են, և հիմա մեծամեծ կարաւաններ կազմած կ'իջնեն դաշտերն, և սերմերն ու ապագայ հունձքերը վճացնել կը սպառնան, միանգամայն մեծ վնաս հասցնելով գիւղաբնակ ժողովրդեան տնակներուն ու շտեմարաններուն։ Թիթոդիսի կառավարիչը դիմեց Աթէնքի կառավարութեան, հարցնելով թէ ինչպիսի միջոցներ ձեռք առնով պէտք է այս աղէտին դէմ դնելու համար։ Ի Աթէնքի կառավարութիւնը դրամական մեծ մրցանակ մը խոստացած էր դաշտային մուկերը ջնջելու լաւագոյն միջոցը ցուցնողներուն, և որովհետեւ անկէ ի վեր տարի մը անցաւ, կառավարիչը կը փափաքի գիտնալ թէ դրական բան մը կրնայ յանձնարարուիլ իրեն։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ.—Խորհրդարանն այս օրերս կը զբաղի Սակարանի միջնորդաց խնդրով։ Փարիզի Սակարանը միշտ խօսել կուտայ իւր վրայ։ Սեղանաւորական ազմուկին մեղանչորհը կը վայելէ կարծես։ Բայց մերթ ընդ մերթ անօգուտ չըլլար յիշեցնել թէ Ֆրանսայի մէջ ուրիշ վեց Սակարաններ ալ կան, ուր արժեթուղթեր կ'առնուին կը ծախուին։ Պարկեշտ գաւառայիներուն նման, այս վեց գաւառային Սակարանք ձայն ձուն չեն հաներ, պէրսէր Փարիզցւոյն թողով աշխարհի ուշն և ուրոյնն իւր վրայ հրաւիրելու աննախանձելի դերն։

Այս Սակարանք կը գտնուին կարեւորութեան կարգաւ՝ Լիոնի, Մարսիլիա, Պոռաս, Լիլ, Թուլուզ և Նանթի։

Լիոնի Սակարանը Ֆրանսայի հնագոյն Սակարանն է։ Լիոն քաղաքին հարստութիւնը, կարեւորութիւնը, փարիզի ու Մարսիլիոյ միջեւ կեդրոնական դիրքն, ու մօտաւորութիւնը թէ Իտալիոյ և թէ Ժընեվի, բնականապէս իւր Սակարանին ալ կարեւորութիւնը կ'աւելցնեն։ Հոն պայմանաժամով (ազատ) բաւական գործ կ'ըլլայ։ Շատ մը թուղթերու վրայ շահադիտական մեծաքանակ տուրեւառ կ'ըլլայ։ Այն կողմերու գործարանաց թուղթերուն վրայ կանխիկ տուրեւառ կ'ըլլայ, օրինակի համար հանքածխոյ և մետաղագործական ընկերութեանց թուղթեր։ Հիմակ ալ ելեկտրականութեան վրայ զանազան մեծ գործեր կը պատրաստուին, որոյ բաժնեթուղթերուն համար միակ Սակարանը Լիոնի Սակարանը պիտի ըլլայ։ Քիչ մը Լիոնէն և Իւնոն ժէնեթալ դրամատունն հոն կազմուած են։ Լիոնի այս սեղանաւորական Սակարանին քով կայ վաճառականական Սակարան, որ Ֆրանսայի մէջ մետաքսի առջին հրապարակն է, և աշխարհի դլխաւոր հրապարակներէն մին այս ապրանքի վրայ։ Լիոնի սեղանաւորական Սակարանն օրն երկու գումարում կ'ընէ։ Մին երեկոյին տեղի կ'ունենայ։ Փարիզի Սակարանին հետ յատուկ հեռագրաթելով կապուած է։

Մարսիլիոյ Սակարանը Լիոնի Սակարանէն անմիջապէս ետքը կուգայ։ Շոգենաւային ընկերութեանց, նաւային շինութեանց, զտարանաց, իւղի և աճառի գործարանաց, հանքաց և այլ ընկերութեանց թուղթերուն վրայ շատ գործ կ'ըլլայ հոն։ Իրեն յարակից վաճառականական Սակարանն եւս մեծ ոգեւորութիւն կուտայ։ Մարսիլիա գաղութաւոր հրապարակն է Արեւելքի և Ռուսիոյ ցորենեղենին, ֆրանսական և օտար իւղերուն (քարիւղ, ձիթ, ձէթ, ևն)։ Այս ապրանաց վրայ բազում շահագիտութիւնք կ'ըլլան։ Մարսիլիոյ Սակարանն եւս այսուհետեւ երեկոյեան գումարում մը պիտի ունենայ։ Փարիզի Սակարանին հետ յատուկ թելով կապուած է։

Պոռաս մեծ հրապարակն է ֆրանսական գինիներու։ Գինիի վաճառականութիւնն հոն զգալի ազդեցութիւն ունի սեղանաւորական Սակարանին վրայ։ Այս Սակարանի մէջ կ'առնուին ու կը տրուին շոգենաւային ընկերութեանց, նաւային շինութեանց, Սպանիոյ, ֆրանսական գաղթականութեանց և հարաւ-ամերիկեան թուղթեր։ Նմանապէս օրական երկու գումարում Սակարանի մէջ, և յատուկ թել Փարիզի հետ։

Լիլի սեղանաւորական Սակարանին մէջ միայն կանխիկ առուծախ կ'ըլլայ։ Տեղական արժեթուղթոց համար լաւ հրապարակ մ'է ածխահանքերու, մետաղագործարաններու, հիւսարաններու, մանարաններու, բամբակի և բուրդի գործուածներու յատուկ հաստատութեանց թուղթեր։ Պելժիոյ դրացի ըլլալով, այն պատճառաւ շատ մը գործեր իրեն սեփական են։

Թուլուզի և Նանթի Սակարանք երրորդական կարեւորութիւն ունին։ Մինչ Լիլի Սակարանին մէջ պետական արժեթղթոց վրայ գործ չըլլար, այլ հրամանք ուրիշ Սակարաններ կը ղրկուին, Թուլուզի Սակարանին մէջ պետական արժեթղթի կ'առնուին կը տրուին, բայց կանխիկ տուրեւառով։ Ի Նանթ, նաւային և անդրովկիանեան ընկերութեանց թուղթեր կ'առնուին կը տրուին առուծախ։

Հավռ Սակարան չունի թէեւ, բայց Հավռի հրապարակը մեծ կարեւորութիւն ունի բամբակի, խահուէի և շաքարի համար, որք կանխիկ կամ յանձնելի պայմանաւ՝ մեծաքանակ կ'առնուին կը տրուին հոդ։ Հավռի առեւտրական Սակարանը տեսակէտով մը ամենէն կարեւորն է Ֆրանսայի։ զի հոն հաստատուած է ամերիկեան, անգլիական և հոլանդական Բէլբինկ-Հաուզի դրութիւնն, որով վաճառականք և սեղանաւորք իրարու դրամ չեն տար, այլ պարբերաբար ընդհանուր հաշուեյարդարութիւն մը կը կատարեն, միայն տարբերութիւններ վճարելով։ Այս պատուական հաստատութիւն Ֆրանսայի ուրիշ հրապարակաց վրայ հիմ բռնած չէ դեռ, զի կարգ մը նախապաշարումներու կը դպչի, և անպարկեշտ միջնորդներու շահը կը փճացնէ։ Միայն Ռուպէ և Թուլքօան քաղաքները կը ջանան յայտմ մասին հետեւիլ Հավռի օրինակին։ Այս հաշուեյարդարութեան սընտուկներն, իրենց բաժնետէրերը մեծ շահ վճարելով հանդերձ, ամենամեծ ծառայութիւն մատուցած են վաճառականութեան, անակնկալ ձախողուածներու կամ ապգնապներու (ֆէյլ) առաջքն առնելով, բազմացնելով և պարկեշտ ուղղութեան մէջ պահելով պայմանաժամով (ազատ) գործառնութիւններն։ Հավռ այնքան կ'ըլլայ վաճառքներով որ թուղթերու վրայ գործ տեսնելու ժամանակ չունի։ Ֆրանսայի ամեն հրապարակներէն աւելի, Հավռն է որ սեղանաւորական գործ կ'ընէ Անգլիոյ հետ, և Անգլիացիները սեղանաւորական և առեւտրական ապարէզին վրայ ամենէն ազէկ ճանչցողներն Հավռցիք են։ Արժեթղթոց և բաժնեթղթոց վրայ հրամանք Փարիզ կը ղրկուին։

Հեռաձայնը՝ Փարիզի և գաւառաց մէջ՝ նոր ոգեւորութիւն մը տալ կը խոստանայ այդ գաւառային սեղանաւորական Սակարաններու։

Ի ՎԻԵՆՆԱ, ամեն հանրային հիւանդանոցք Պեստութեան ուղղակի հսկողութեան ներքեւ են։ Հիւանդ ընդունելու համար յանձնարարագրի պէտք չկայ։ Անխտիր ամեն հիւանդք կ'ընդունուին հանրային հիւանդանոցները, բժշկական վկայագիր մը ցուցնելով թէ հիւանդ են, կամ իրենց արարքին երեւոյթէն հիւանդ ըլլալնին կը կցուելով։ Դարմանուող ամեն հիւանդի համար, գանձապետը կ'ընդունի օրական գումար մը, զոր հիւանդին պարտքայք կը վճարեն, եթէ կարողութիւն ունին։ Եթէ չունին, իրենց չրջանակին ազգատարիներ վարչութիւնը կը վճարէ։

Ի ՍՊԱՆԻԱ, Մուրսիոյ գաւառին Մադրոնի կապարի հանքին մէջ թունաւոր կազերու յանկարծակի հաւաքում մը տեղի ունենալով, բանւորներէն 27 անձինք խեղդամահ եղան, և կազերու հոսն այնքան դէջ և մահացու էր որ օրերով մարդիկ չկրցան մօտենալ՝ հանքէն դիակներ դուրս հանելու։ Ադեխարշ տեսարաններ տեղի կ'ունենային հանքին մօտ՝ որբացեալ դաւակներու, կիներու, ծնողներու կողմէ, որք իրենց սիրելիներուն հանքէն հանուելուն կը սպասէին, գ'նէ անոնց դիակը տեսնելու յուսով։ Տեղութիւնը զօրք ղրկեց։ մի կողմէ օգնելու ազատարարներուն, միւս կողմէ բարեկարգութիւնը պահպանելու։

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐ այս օրերս բարեգործութիւն մ'ընաւ հետաքրքրաշարժ պարագայի մը մէջ։ Պատանեկական ձեռամբ գրուած նամակ մը կ'ուղղուի իրեն, յորում սապէս գրուած էր. «Սիրելի Տէր Կայսր, Կ'ուզեմ Կրթարան մտնել և աստուածաբանութիւն սովրիլ։ Բայց իմ հայրս քանի մը գաւակներ ունի, և անկարելի կ'ըլլայ։» Տղայն Մարպուրկի փոքր արհեստագործի մը որդին էր։ Կայսրը նամակ ղրկելով տեղւոյն կառավարչին, քննութիւն կատարել կուտայ, և կ'երեւի թէ կառավարիչը նպաստաւոր տեղեկագիր կը ղրկէ։ զի Կայսեր որոշումը բերկրութեամբ կը ընուպատանեկին սիրտն։ Կը հրամայէ Կայսրն որ տղուն երեք տարուան կրթարանի և այդ ամբը կայսերական անձնական գանձէն հոգացուին. որպէս զի աստուածաբանական Կրթարանն յաճախած միջոցին բեռ չըլլայ իւր հօր։

ՖԷՌԻ ԵՒ ՎԷՐԹԷՐ.—Այս երկու անուններուն մէջ ի՞նչ կապակցութիւն կըրնայ ըլլալ։ Մին Ֆրանսայի Ծերակոյտին նորընտիր նախագահը, միւսը Կէօթէի ամենէն սրտաշարժ երկերէն մին դիւցազնը։ Բայց որովհետեւ Պ. Ժիլ Ֆէռի նորէն օրուան մարդն է՝ ի Ֆրանսա, անոր ընտանեկան կեանքին վրայ տեղեկութիւններ տալով, Փարիզեան լրագիրք ոմանք երեւան հանած են թէ Տիկին Ֆէռի գերմանական ծագում ունի, և է թոռնորդին Շարլոդի, որ Կէօթէի բարեկամուհին եղաւ, Վէրթէրի սիրեալն, և գիւցազուհին այն սրտաշարժ վէպին, ինչպէս և Կէօթէի նոյն գործէն հանուած թատերագրին։

ԽԱՐԴԱԽ ՎԱՇԽԱՌՈՒ.—Կայսի երեւելի և փայլուն սեղանաւորներէն Պ. Ա. Ուրպան այս օրերս ձերբակալեցաւ գանգատ խարդախութեանց պատճառաւ, որոյ վրայ հետաքրքրաշարժ պատմութիւնը կ'ընեն ռուսական լրագիրք։ Ռուսական Կ. Պոլսոյ նախկին հիւպատոս Պ. Սթրադի որդին իւր չափահասութեան իրը 300 հազար ֆր. ի պիտի ժառանգեր, բայց չուզելով մինչեւ այն ժամանակ սպասել, Պաքաւի Հրելի մը միջոցաւ կը դիմէ առ Պ. Ուրպան, որ կը հաւանի 30,000 ֆր. փոխ տալ Պ. Սթրադ պատանւոյն, ի փոխարէն 80,000 ֆր. ի փոխանակագիր մը առնելով, նաեւ հանգուցեալին կոպակն և իւր (Ուրպանի) անուան ապահովագրութիւն մը կենաց վրայ ապահովագրութեան ընկերութեան մը, չորս տարիէն դանձելի. զի Սթրադ պատանին 18 տարեկան էր դեռ։ Այս ահռելի պայմաններով փոխատուութիւնը վերջանալէն ետեւ, Հրէին 12,000 ֆր. միջնորդչէք կը տրուի, և Պ. Սթրադ 10,000 ֆր. առնելով, Կ. Պոլիս կուգայ։ Պուքրէշ դառնալով, պատանին կը գրէ առ Ուրպան, փոխ առնուած գումարին Հայցեալ մասը պահանջելով։ Նամակ մը կ'առնու, որով պահարանին վրայ նշանակուած էր թէ մէջը կայ 3,000 ֆր., մինչ բանալով 300 ֆրանք միայն կը գտնէ։ Փիչ մը եւոքը կ'ընդունի երկրորդ նամակ մը, որով պահարանին վրայ նշանակուած էր թէ մէջը կայ 10,000 ֆր., բայց այս անգամ պատանին գործն իմացուցած ըլլալով գատական իշխանութեան, ի ներկայութեան պաշտօնէի կը բացուի նամակն, որոյ մէջէն 1,000 ֆր. միայն կ'ելնէ։ Ասոր վրայ, Կայսրի ընդհանուր դատախազը քննութիւն բանալով, սեղանաւորին քովէն կը գտնէ ո՛չ միայն պատանւոյն փոխանակագիրներ, այլ և ուրիշ շատ մը ծանր անկարգութեանց հետքեր, կրկին օրինակ բռնուած տումարներ, ևն., ի միասն գանաղան անձանց գործուած։

Պ. ԺԻԼ ՍԻՄՈՆԻ վրայ ևս խորհուեցաւ՝ իբրև ընտրելի Ծերակոյտի նախագահութեան։ Բայց անուանի դրագէտն այնքան ծեր է և վերջերս այնքան հիւանդոտ, որ մանաւանդ արդի հանգամանաց մէջ Ծերակոյտի նախագահութեան պէս ծանր պաշտօն մը կատարելու անկարող ըլլալն յայտնեց, որով քուէները դարձան Պ. Ֆէռիի վրայ։

ԱՆԹՈՆ չբռնուեցաւ վերջապէս, և որովհետեւ կաշառքի դատն ի մօտոյ պիտի սկսի, Եկեղեցական Ատենի նախագահն հրաման ղրկեց ընդհանուր դատախազին, որպէս զի օրինական ձեւակերպութիւնները կատարէ՝ ի բացակայութեան դատել տալու համար Առթոն։ Այս ձեւակերպութիւններ են՝ դատական կշռադիրը փակցնել տալ փախստականին վերջին բնակարանին վրայ ի Փարիզ, հոն զինուորական փող հնչեցնելով այս գործողութեան միջոցին, և նոյն կշռադիրը փակցնել նաեւ իւր շրջանակի թաղային պաշտօնատան եւ դատարանին դրանց վրայ։

ԻՌԼԱՆԴԱՅԻՔ Շիբակոյի Արուեստահանդէսին մէջ պիտի ունենան «Իռլանդական գիւղ» մը, և միայն այս բանին համար 10,000 ոսկիէ աւելի կը ծախսեն։ Իռլանդա իւր մասնաւոր ճիւղը պիտի ունենայ, և ասոր ալ մէկ մասնաճիւղը պիտի ըլլայ՝ «Իռլանդական մասնաճիւղն», ուր Իռլանդացի կանանց ձեռագործներն ի տես պիտի դրուին։ Աւելորդ է ըսել թէ Անգլիոյ և Սկովտիոյ կանանց գործունէութիւնք ևս մասնաւոր ճիւղերու մէջ ի ցոյց պիտի դրուին։

ՎՈԼԴԵՌԻ 500 կոտոր չհրատարակուած նամակները գտնուեր են Ժընեվի մօտ բնակեալ Պ. Թրոնչէնի գրադարանին մէջ։ Այս անձ թոռնորդին է համանուն Տոքթորին որուն հետ միչտ կը թղթակցէր Վոլդեռ։ Ի մօտոյ պիտի հրատարակուին։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔԻ» (81)

Է. ԳԻՇԵՊՈՒՐ ԵՒ Է. ԼԻՏԶԷՆ

ՓԱՐԻԶԻ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՔ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀՐԵՇՏԱԿԱՆ ԵՒ ՍԱՏԱՆԱՅԻՆ

Սակայն, իր ցաւագին գործին մէջ իրեն օգնելու համար, կոմսուհին ստիպուած էր երկու խորհրդակիցներ առնել հաւասարապէս համ, մին շահով, միւսն անձնուիրութեամբ։

Առաջինն էր Լուի, տիպար սենեկապետուհի մը, անցողակի հնազանդութեան անձնատուր։

Միւսն էր Կասթոնին ատնտուն, ազնիւ և արժանաւոր կին որ երբէք հեռացած չէր այդ ընտանիքէն յորմէ հետէ անուցած էր գեռատի կոմսը։

Միշտ Ֆրանսուայի հետ խեղճ մայրը կը սպասէր իր զաւկին վերադարձին։ Շատ անգամ, երկար գիշեր մը ազօթքով անցուցնելէ ետք, լուսնալուն՝ իրարու քով պառկած կը գտնուէին անոնք, տիրուհին թիկնաթոռի մը վրայ, աղախինը աթոռի՝ մը։

Երբ Կասթոն ետ դառնար, անոր քայլերուն կը հետեւէին, մեղմօրէն կը խօսէին հետը, կը խնամէին զայն և այն ատեն կը բաժնուէին անկից երբ պառկեր ու քնանար։

Զգուշութեամբ կը հեռանային, սրտերնին լեցուած, դուռները գոցելով անչուկ։ Լուռ ու մունջ կը մնային, չհամարձակելով իրարու հաղորդել իրենց տխրունակ մտածումները։

Սակայն, երբեմն իրենց վիշտը դուրս կը պոռթկար, և անոնք ինքնաբերաբար կը նետուէին իրարու բազկաց մէջ, հեծկլտանքներ արձակելով։

Մասնակից կ'ըլլային մէկզմէկու վիշտին՝ իբր թէ քոյր եղած ըլլային։ արդարեւ քոյր էին սիրտով, անձնուիրութեամբ և ցաւով։

Ուրախութեան պէս, վիշտն ալ կը միացուցէ վեհանձն հոգիները։

Այն օրն երբ տեսանք թէ ինչպէս Կասթոնի փորձն անյաջող ելաւ ընդդէմ Սիսթայի, Ռոսթանի ապարանքն կանուխ դուրս եկած էր երիտասարդը, առանց իսկ սպասելու կոմսուհիին ելնելու։ Երկար ատենէ ի վեր կորսնցուցած էր դուրս ելնելէ առաջ իր մայրն համբուրելու յարգալից սովորութիւնն։

Բոլորովին իր մտածումներովն, իր զգաստիրութիւն համակուած, օրուան մէկ մասն անցուց բուռն փորձերով, տեղի տալով չարժման մը պէտքին զոր կը յայտնէր իր միտքին յուզումը։

Սիսդաի հետ ճաչելով, կարծեց թէ պարտաւոր է շամբանեաէն խնդրել իրեն պէտք եղած յանդգնութիւնը, առանց չափազանցութեան սակայն, քանի որ կրցաւ մանկամարդ կնոջ ընկերանալ Իթիաին թատրոնը։ Բայց, իր ծիծաղաշարժ արկածէն ետք Սէգաի սենեկին մէջ, ամօթալից, սիրտը կատաղութեամբ լի, անչուշտ ուզելով գինովնալ, աղէտալի գաղափարն ունեցաւ մտնելու այն դինետուններէ մին որք ամբողջ գիշերը բաց կը մնան։

Դաղտաբար Սիսդաի տունը մտնելէ առաջ ճամբու դրած էր իր կառքը։

Դինետունէն հետիոտն դարձաւ Ռոսթանի ապարանքը։

Կատաղութեան սոսկալի վիճակի մը մէջ կը գտնուէր։

Ժամը երեքն էր երբ դուռը զարկաւ։

Կոմսուհին եւ Ֆրանսուազը անոր կը սպասէին անձկալից։

Լուի պառկած էր և բոլոր ծառայները կը քնանային։

Ուռնակն, ուժգնօրէն բախուելով, սասանեցուց կաղնեփայտէ ծանրակուռ դուռը։ Ազմուկը թնդաց և սարսռացուց կոմսուհին որ թեթեւապէս կը մրափէր։

Ֆրանսուա վար իջաւ հապշտապ։

Տակաւին սանդուխին վրայ էր երբ ուռնակն իրարու վրայ թնդաց։

Կասթոն երբէք ունեցած չէր այն առաքինութիւնը զոր համբերութիւն կ'անուանեն։

Դանապանը, ընդոստ արթննալով, ահապարանօք քաշեց չուանը։

Կասթոն ներս մտաւ հայհոյելով, ուժգնօրէն հրեց դուռը, որ գոցուեցաւ ահեղ չառաջնումով, և բակին անցաւ երերաքայլով։

Այս բոլոր ազմուկը լսելով, կոմսուհին սարսուռ մը զգաց։

Անդաստակին տակ, Կասթոն իր զիմացը դտաւ Ֆրանսուազը, որ դէպ իրեն կը յառաջանար, ճրագ մը ի ձեռին։

—Հոս ի՞նչ կ'ընես, հարցուց անոր Կասթոն դաժան ձայնով և ճրագը յափշտակելով անոր ձեռքէն։ Լուին սպասելու է ինձ, ո՞ւր է։

—Լուին կը քնանայ, Պարոն կոմս, պատասխանեց աղախինը զողզողալով։ կառապանին միջոցաւ ըսել տուած էիք որ կրնայ քնանալ։

—Բեղի՞ ով ըսաւ որ իրեն տեղն անցնիս։

—Տիկին կոմսուհին մտածեց թէ...

—Ի՞նչ մտածեց։

—Թէ կարելի է որ տուն դառնայիք... եւ...

—Ուրեմն հոս կը լրտեսե՞ն զիս, ըսաւ բարկութեամբ։

Դայթելով դայթելով սանդուխին վերեւն հասած էր։

—Կասթոն, մէկը չի լրտեսեր զձեզ, ըսաւ անոր մայրը որ մինչեւ վերնագաւթակն եկած էր։

—Նորէն կ'ըսեմ, կը լրտեսեն զիս, կը հսկեն վրաս, յարեց Կասթոն խիստ ձայնով։ Ա՛հ, տակաւին ատնտուի ձե՞ռք եմ։

—Անդամ մըն ալ մայրդ ձեզ կ'ըսէ, Կասթոն, թէ վրանիդ հսկող չիկայ։

—Ուրեմն ի՞նչ կ'ընեք։ Ի՞նչ կ'ընէ նաեւ սա խենդ պառաւը։

—Աս խենդ պառաւը, զաւակս, ըսաւ կոմսուհին, աւելի դիւրազգած ուրիշներուն եղած նախատինքին քան իրեն, աս խենդ պառաւը երկու անգամ ձեր կեանքն ազատած է...

—Ասոր համար տակ կ'առնէր, պատասխանեց Կասթոն խիստ ձայնով։

—Պարոն կոմսն իրաւունք ունի, մրմնջեցաւ հեգ ատնտուն երկու խոշոր արցունք սրբելով։

Սենեակ մտան։

—Օ՛հ, զաւա՛կս, զաւա՛կս, գոչեց խեղճ մայրը վշտագին ձայնով, իրա՞ւ դուն ես այդպէս խօսողը։

—Այո, ես եմ. ուզածիս պէս կը խօսիմ, ի՞նչ կայ...

—Թշուա՞ռ, թշուա՞ռ տղայ, հեծեց տիկին տը Ռոսթան

—Օ՛հ, մանաւանդ քարոզ չեմ ուզեր... կ'իմացուցեմ ձեզ որ ատիկա լսելու ոչ տարիքն ունիմ ոչ սիրտը... Օ՛ն թողէք որ անցնիմ։

—Կասթո՛ն, Կասթո՛ն, սիրտս կը խորտակես։

—Ագէ՛կ, ըսաւ գինովը ուսերը թոթուելով, հիմակ ալ երեւեակնի սկսանք։

—Պարոն կոմս, կը մեռցունէք կոր տիկին կոմսուհին, գոչեց ատնտուն։

Ֆրանսուազ առաւ գաւաթ մը շաքարխառն ջուր որ կոմսուհիին համար պատրաստուած էր և Կասթոնին կարկառեց։

—Ջո՛ւր, պոռաց երիտասարդն անդին հրելով գաւաթը, քիթիս խնդա՞ լուզեն հոս... ինչպէս հոն։

Եւ տարն ուժգնօրէն գետին զարկաւ։

Երկու կիները անոր երեսը կը նայէին զարհուրանքով։

Ատնոց առջեւ կեցաւ բազուկները խաչաձեւած, սպառնալից ակնարկով։

—Զաւակս, սիրելի զա՛ւակս, հանդարտե՛... Ա՛հ, յարեց կոմսուհին երեսը ձեռներուն մէջ պահելով, դժբախտին խելքը գլուխը չէ ա՛լ։

—Լմնցա՛ւ, ըսէք թէ գինով եմ... ատիկա մինակ իմ գլխնալու բանս է... Ուզածս կ'ընեմ... Սիսդաին հետ կը խմեմ... այո, ինքն է ինձի խմցունողը... եւ ես գոհ եմ... երբ խմեմ... Սիսդան վռնտեց զիս... այո, քիչ մը առաջ վռնտեց... դո՞ւք ալ վռնտել կուզէք... Օ՛հ, օ՛հ, օ՛հ, դուք և ան ինձի դէմ, տարօրինակ բան է...

Լսելով այս անունին արտասանուիլն, որ քանիցս արդէն հասած էր իր ականջին, կոմսուհին անսահման սարսուռ մը զգաց։ Թէ՛ ամաչում էր, թէ վիշտ։

Ի՞նչ, իր որդին անամօթութիւնն այն ատիճանի՞ն կը հասցուներ որ իր մայրն ալ, Ռոսթան կոմսուհին, միմնոյն ատիճանին վրայ կը դնէր իր տարիքուհիին, վճարեալ կնոջ, անպատուեալ աղջկա՞ն հետ։

Կոմսուհին ըմբոստացաւ։ Այս բանին մէջ ճշմարիտ նախատինք մը տեսաւ։ Բոլոր արիւնը սիրտը խուժեց։ Իր կնոջական պատիւը, իր մայրական արժանապատուութիւնը, իր ցեղային հպարտութիւնը, ամէն բան բոլոր բարձաւ ի նա։

Վեր առաւ գլուխը, և գայրացկոտ ձայնով մը։

—Լռեցէք, պարոն կոմս, ըսաւ խստութեամբ, նախատեցէք Ռոսթան կոմսուհին։

—Օ՛հ, տիկին, մի՛ կշտամբէք զինքը, գոչեց ատնտուն ահաբեկ։

Կոմսուհին ձեռքովն հեռացուց պառաւ աղախինը և շարունակեց.

(Շարունակելի)

ԱՂԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

Ամեն · Ս. Պատրիարք Հայրն շաբաթ իրիկուն Երուսաղեմատուն երթալով հնորհաւորական այցելութիւն տուաւ Երուսաղեմայ պատրիարքական փոխանորդ Գեր · Սիմէոն արքեպիսկոպոսին, որուն անուան տօնախմբութիւնն էր։ Ն · Գերապատուութիւն կիրակի օրն ընդունեց նաեւ բազմաթիւ եկեղեցական հարց և աշխարհականաց հնորհաւորական այցելութիւնները։

Տ-ոյ շաբաթաթերթի յունուար 31ի թուոյն մէջ կը կարդանք հետեւեալ լուրերը։

Էջմիածնի վանական վարչութիւնը լուծեալ է · նորի մասին Սինոդի մէջ մեծ անհամաձայնութիւններ են տեղի ունեցեր։

—Յունուարի 6ին աղէտի առթիվ մեղադրած Հ. Կոստանդին Արարատեանին եւ հիւսն Պ. Մելիքեանին նահանգական դատարանը արդարացուց։

—Սուտ է այն լուրը թէ Լեւոն աբեղայ Խօջայեանը նշանակելու է Թիֆլիսի թեմի գպրոցների տեսուչ։

—Ս. Երիւանդեանց եպիսկ. Գասպարեանը երեքշաբթի, ամսոյ 27ին, ուղեւորուեց դէպի Էջմիածին։ Մեծեր բանի եկեղեցու օծումը յետաձգւում է։

—Խոլերայի առաջն առնելու միջոցների մասին խորհուրդ անելու համար մօտերքս հաւաքուելու է Թիֆլիսում Կովկասեան բժիշկների մի ժողով։ Ցաւալի է որ ձմեռը անցնում է ահա և ոչ մի ընկերութիւն իր համաձայնութիւնը չը յայտնեց տպագրելու բժ. Վահան Արծրունու՝ խոլերայի մասին տեսորը հայագաւառը օրինակներով և ցուցելու ժողովրդի մէջ։ Կնայնի զուգացու համար պարապմունքներից ազատ այս ժամանակը և այնուհետեւ՝ գարնանը այլ եւս ոչնչով կարելի չի լինիլ ստպել նրան կարդալու, երբ կը սկսուեն գաւառային պարապմունքները։

—Պ. Արսէն Ամբրումեանին, որը յայտնի է Բագրի հայ հասարակութեան իր զօրեղ տեսնօր ձայնով, մի խումբ հարուստներ մտադիր են ուղարկելու արտասահման կատարելագործելու։ Այդ գործի մէջ նախաձեռնող է Բագրեցի Պ · Բիւստաֆոր Թումայեանցը · օժանդակող խմբի մէջ են Պ. Պ. Արամեան, Ն. Առաքելեան, Գ · Այվազեան, Կ. Պողոսեան և Գ. Բալայեան։

—Հաստատ տղբերից իմանում ենք որ Բագուում բացելու է մօտերումս մի քիմիական գործարան։ Հիմնարկը են Պ · Պ. Բախմետև, Ա. Զորզանեան և Կ. Խաչատեան։ Մի քանի գրամատերեր կը մասնակցեն այդ ձեռնարկութեան իրենց զբաղմունքով։ Այս մի քանի օրերի մէջ ստորագրելու է վերջնականապէս պայմանագիրը։

Իգդիրի հայ ընթերցասէր Տնօրէն խորհուրդն հաղորդած է մեզ, յունուար 26 թուակիր նամակ մը,—զոր երէկ միայն ստացանք,—այդ հաստատութեան 23 րդ տարեշրջանի հաշուեցոյցն, որ աւասիկ ·

ՄՈՒՏՔ	Մէջիտա 33 զրշ.
Նախորդ շրջանէ պատրաստ դրամ	318 25
Բաժնորդներէ	6455
Թանգարանի հասոյթ	1683 75
Փոխառութիւն Ուսմն. Ընկերութենէ	839
Նրատեղանի հասոյթ	399 50
	9695 50

ԵԼՔ	Մէջիտա 33 զրշ.
Տան վարձք	3742 25
Գործակատարին	2054
Լրագրաց բաժանողազրութիւն	1030 50
Առնուած գրեան	902 75
Կազ, Պատրոյգ, Ճրագ, Ապակի, եւն.	847 25
Տպագրութեան եւ գրքերի	297
Ընթերցասէր կարասեաց ապահովագր.	177 50
Կազմարարին	172
Բօսպա, նամակի թուղթ, եւն.	100 50
	9323 75
Պատրաստ դրամ	371 75
	9695 50

Գնորհեն շուրջ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆԸ · —Պարսի ասպիսան տրուեցաւ կայս · պարատան թարգմանիչներէն Հագգը պէյի, որ կայս · կառավարութեան կողմէ Շիրակոյի Արուեստահանդէսին պատուիրակ կարգուած է։

Իւլայի երկրորդ ասպիսան տրուեցաւ Գատրգիւղի թաղապետութեան տնօրէն Մէհմէտ Ալի էֆէնտիի և Սանկիի երկրորդ ասպիսան՝ քաղաքապետութեան քնիչ Օսման էֆէնտիի, ի վարձատրութիւն այն բարւոք ծառայութեանց զոր մատուցած են Գատրգիւղի հրդեհը մարելու համար։

Ազատարարի չքաղրամ տրուեցաւ Քաղաքապետութեան երկրաչափական գիւանին ուսուցիչ հաղարապետ Ասոփ պէյի, Սկիւտարի թաղապետութեան առաջին երկրաչափ Անտոն էֆէնտիի, Վեհ · Սուլթանին մատուցուելիք ազատարերու պաշտօնեայ տեղակալ Ահմէտ պէյի, ճարտարապետ Եուսֆ ու Մանոլ էֆէնտիներու, հրդեհի պաշտօնեայ Անտոն էֆէնտիի, Գատրգիւղի թաղապետութեան բարպանայ պետ Մէհմէտ էֆէնտիի, Ջրհանկիր զօրայ վաշտին սպայներէն դեր-տեղակալ Ալի էֆէնտիի, Լատա պէյի, սօպաքը Գոչոի և թաղապետութեան Ա · ջրհանակի բարպաններէն Սիլէյման էֆէնտիի, ի վարձատրութիւն այն ծառայութեանց զոր մատուցած են Գատրգիւղի հրդեհը մարելու գործին մէջ։

Ի ԿԱՅՍ · ՊԱԼԱՏ · —Բարձր · Սպարապետը և Ներքին գործոց ու Ելմտական Վեհ · նախարարը երէկ կայս · պալատ երթալով ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

ԿԱՅՍ. ՇՆՈՐՀ · —Վեհ. Սուլթանը յուսն ոսկի շնորհած է Տէպիթանը Իրանեան վարժարանին ի նպաստ արքունեաց նուագահանդէսին համար։ Ն · Կ. Վեհափառութիւն հրամայած է միանգամայն որ կայս. պալատան նուագածուայ խումբին Շառլ Վենտրա պէյ և Ճէմիլ պէյ մասնակցին նոյն նուագահանդէսին։

ՔԱՂԱՔԱՊԵՏ Վեհմ. Բըլաֆ փաշա անձնական տկարութեան պատճառաւ երէկ չկրցաւ իւր պաշտօնատեղին երթալ։

ԴՍՏԱԿԱՆ նախարարութիւնն երէկ իրիկուն Վեհ. Սուլթանին մատոյց ցուցակն այն քառասուն և եօթ բանտարկեալց, որք իրենց պատժոյն երկու երրորդ մասն աւարտած ըլլալով, Ն. Կ. Վեհափառութեան ծննդեան տարեդարձին առթիւ ազատ պիտի արձակուին։

ՄԱՐՍՍՏԱՆՑ մէջ պատահած զեղծումներուն առթիւ, Վեհ. Սուլթանն հրամայած է թէ մայրաքաղաքս և թէ գաւառայ մնբասատուններուն մէջ հարկ եղած բարենորոգումներն իւրաքանչիւր տեղեկագրել Իրեն։

ԱԹԷՆԻՔԻ մէջ վերջ. Զին յոյն վաճառական մը մեռած է, Տիմիթրաքի Ռախարիան անուն, որ Պոլսոյ մէջ ալ առեւտրական մեծ տուն մը ունի և ծանօթ է բոլոր հայ վաճառականաց։

Ցիշեալ անձն բարեսէր և աղքատասէր անձ մը ըլլալուն՝ Ազգ · Ցակոբեան և Կիւմիւշկիրան էֆէնտիք ի Նրպոնա Ազգ · Հիւանդանոցի ամերիկեան կաւ հաւաքած տաներն, միտ իրեն դիմած և այդ կաւէն ստացած են բաւական քանակութեամբ վերջին անգամ ալ Հիւանդանոցի վերաշինութեան առթիւ ինքնաբերաբար յիսուն ոսկինուիրած էր հանգուցեալը։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ և Թղթատարական վերատեսչութեան մէջ դատական գիւան մը հաստատուած և անօրէն կարգուած է Դարեգին. էֆէնտի։

ՀԱՄԻԴԻՅԻ ՀԵՌԵԼԱԳՈՒՆԴԵՐ · —Կայս · Իրատէ մը հրամայած է որ Մուսուլի նահանգը արքունի կարուածոյ մէջ բնակող արաբ և քիւրտ Աշիրէթներն եւս մասնակցին Համիտիյէ հեծելագունդերու կազմակերպութեան։ Դ · Զօրաբանակին հրամանատար Զէքի փաշա ձեռնարկած է կայս · սոյն Իրատէին գործագրութեան։

ԵԼՄՏԱԿԱՆ յանձնաժողովն երէկ ի նիստ գումարուեցաւ ընդ նախագահութեամբ Երմական Վահմ · նախարարին և երմական խնդրոց վրայ խորհրդակցութիւններ կատարեց։

ԶՐՀԱՆԿԻՐ զօրաց հրամանատար Զէյէնեի փաշա և նաւային ջրհանկիր զօրաց հրամանատար Մէհմէտ փաշա, կայս · Իրատէի մը համաձայն, խորհրդակցութիւններ կատարելով ծրագիր մը պատրաստած և առաջարկած են ջրհանկիր զօրաց վաշտերու համար ինչ ինչ բարեփոխութիւններ ի գործ դնել և Սկիւտարի ու Գատրգիւղի կողմերը ջրհանկիր զօրաց կայաններ հաստատել։ Այս ծրագիր մատուցուած է Վեհ · Սուլթանին։

ՍՈՒՐԲԻ ՀԻՒՄԱՑՈՒՆ · —Երէկ Եվգաֆի պաշտօնատան մէջ, ի ներկայութեան նախարար Ղալիպ փաշայի և այլոց, Սուրբի Հիւմայունը մնուտիներու մէջ զնատուելով յանձնուեցաւ Սուրբի Էմինի և կայս · անձնական Դանձուն նախարարութեան հաշուակալ Հաֆըզ Իպրահիմ էֆէնտիի։

ՖՕՆ ՏԷՐ ԿՈԼՋ ՓԱՇԱ · —Գերմանիոյ կայսրը Կոռէր Աբծոռ պատուանշանը շնորհած է Ֆոն տէր Կոլճ փաշային։ Գերմանացի ռազմական վերջերս Պերլինի Զինուորական Հանդէսին մէջ յոյժ կարեւոր յօդուած մը հրատարակած էր ի նպաստ Գերմանիոյ զինուորական արդի օրինաց, որ քաղաքական ու զինուորական շրջանակներուն մէջ մեծ ուշադրութեան առարկայ եղած էր։

ԴԱՏԱՐԱՆՔ · —Դատական նախարարութիւնը հրահանգ ուղղելով ամեն կողմ, ծանուցած է թէ Հուզուլի դատարանաց կողմէ՝ բացակայ եղող մէկ կողմին համար կարգուած փոխանորդք (վեքիլը մուտլաքիւ) վկայական ունեցող փաստաբաններ ըլլան։

Նոյն նախարարութիւնը տեղեկանալով որ գաւառներու առեւտրական դատարանաց մէջ երբեմն ի բացակայութեան տեղնուած դատերու պահուն դատարանին բարպանք դատարանին կողմէ փոխանորդ կը կարգուին (վեքիլը մուտլաքիւ), հրահանգ ուղղած է ամեն կողմ որ յետ այսորիկ բարպանք փոխանորդ չկարգուին։

ՇԻՐԱԿՈՅՑԻ արուեստահանդէսին մէջ յանուն օսմ · կառավարութեան շինուելիք շինքին գծագրութիւնը պիտի համապատասխանէ ճարտարապետութեան՝ Պապը Հիւմայունի հանդէպ գըտնուած աղբիւրին որ, Սուլթան Ահմէտ կայսեր կողմէ կառուցուած է · Պատուհաններու փեղկերը քանդակագործեալ և սատափակերտ պիտի ըլլան։

ՀՐԴԵՀ. —Երէկ ժամ 8 ½ին, Բերայի Գալաթիսթան փողոցը, Ազգ. Թահթապրուն էֆէնտիի տան վերնայարկէն հրդեհ ծագեցաւ, որուն ծաւալումը կարելի եղաւ արգելուլ անմիջական օգնութեանց շնորհիւ։ Տունը աւերակ դարձաւ։

ԳԱՄԻ ԳՈՐԾԱՐԱՆ. —Արտաքին գործոց նախարարութեան դատական ճիւղի դիւանին տնօրէն Բիրա պէյ մենաշորհ խրնդրած է մայրաքաղաքիս մէջ գամի գործարան մը հաստատելու համար։ Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը նկատողութեան առած է այդ աղերսագիրը։

ՊՈԼՍՈՅ քարտիանց ընկերութիւնը խնդրած էր որ շինուելիք քարտիանց եղբքը դասուած տուներու և հողերու տերերը իրենց կարուածագրերը մինչեւ վեց ամիս ներկայացնեն ընկերութեան։ Պետական Խորհուրդը մերժած է այդ առաջարկը։

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ արոց կանոնագիրն, զոր անցեալ օր հրատարակեցինք, առանձինն տպագրուած է և բոլոր գրավաճառաց քով կը վաճառուի։

ԱՇԻՐԷԹՆԵՐՈՒ վարժարանին բնութիւնք պիտի սկսին Բամազանէն առաջ։

ԳՈՒԼԷՆԻ Պուրկազի մօտ գտնուած կամուրջի մը համար զրոյց չրջած էր թէ փլեր է, սակայն այդ զրոյց անհիմն է։ Սառոյցի կտորներ թեթեւապէս վնասած են այդ կամուրջի ցիցերուն։ Երկաթուղոյ կառախումբերը թէեւ օր մը դադրեցուցեր են իրենց երթեւեկութիւնները, սակայն յետոյ սկսեր են երթեւեկել։

ՊՈԼՍՈՅ պատժական տաճարը վեց ամսուան քանտարկութեան դատապարտեց թրամուէյի կառապան Բավլին, որ անուշադրութեամբ պատճառ եղած էր Բէթրոանուն խուլ-համր տղու մը մեռնելուն, զայն իւր վարած կառքին տակ կոխոտել տալով։

ՕՍՄ · ՊԱՆՔԱՑԻ նորակառոյց չէնքը քննելու և տեղեկագրելու համար, Դրսէ «Սապահ», Քաղաքապետութեան կողմէ յանձնեալով մը կազմուած է, որ այսօր նոյն տեղը կերթայ քննութիւններ կատարելու համար։ Յանձնաժողովոյ նախագահն է առաջին երկրաչափ Մէհմէտ էֆէնտի, և անդամներն են՝ Սպարապետի Դրան ճարտարապետ Յովհաննէս էֆէնտի Ագնատորեան, արքունի Նաւարանի ճարտարապետ Վասիլաքի էֆէնտի, քաղաքապետութեան երկրաչափական գիւանի պաշտօնեայներէն Սիմոն պէյ և ճարտարապետ Քօսթի էֆէնտի։

ԱՒՍԵՐԻԱԿԱՆ կառավարութեան կողմէ պատրաստուած դատական վիճակագիր մը Վիէննայի օսմանեան դեսպանատան կողմէ Արտաքին գործոց նախարարութեան և անտի Դատական նախարարութեան յանձնուած է։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ժողովոյ անդամներէն Վիթալիս էֆէնտի, որ իբրեւ առողջապահական քննիչ Տրապիզոն կը գտնուէր, իր պաշտօնն աւարտած ըլլալով մայրաքաղաքս պիտի դառնայ։

ԵՂԵՌՆԱՏԱՏ տաճարը երեք տարուան շրջայապտ աշխատութեան դատապարտեց Աւետիս անուն մարդ մը, որ իբրեւ գող ամբաստանուած էր։

Պ. ԹՈՒՔԱՍ, ներկայացուցիչ Պ · Նակէմաքէրպի, այս հինգշաբթի օր Զմիւռնիա պիտի ուղեւորի Գասապի երկաթուղոյ գծին գնման վերաբերեալ ինչ ինչ գործողութեանց կատարման համար։

ՍԻՆՕՊԻ ՄԱՔՐԱՆՈՑԸ · —Յայտնի է թէ՝ Սեւ ծովու եզերաց քաղաքներէն հնոտախտն անհետանալուն վրայ, Սինոպի մաքրանոցը փակուեցաւ և քարանթինայի պաշտօնեայք մայրաքաղաքս դարձան։ Անոնց տնօրէնը, զնդապետ Տոքթ · Նուրի պէյ, կայս · պալատ մատուցած է յիշեալ մաքրանոցին իւզաներկ պատկերը։ Այդ մաքրանոց կը պարունակէ 50 ապարատ՝ ուղեւորներուն, պահպաններուն, բժիշկներուն և պաշտօնեայներուն համար, ընդամենը 1200 հոգի պարունակելու ընդարձակութեամբ։ Վերջին համաճարակի պահուն, այդ մաքրանոցը մտած են 11,716 ուղեւորք եւ 5800 նաւաստիք։ Բարանթինա ապասող նաւերու թիւն եղած է 330։

ՎԱՌՆԱՑԷՆ երէկ մայրաքաղաքս եկան բուլգէիցի ութսուն և ինը գաղթականներ։

ՄԱՂՆԻՍԱՅ մէջ անցեալ հինգշաբթի օր սաստիկ փոթորիկ մը ծագելով տուներու տանիքներուն վնասեր, կղմինտները կոտրտեր և հարիւրաւոր տարուան ծառեր արմատախիլ ըրեր է։

ԱՅՏԸՐՆԻ նահանգին մետաքսի տասանորդի տուրքն, որ անցեալ տարի 1,525,000 զրուշի աճուրդի դրուած և ոչ ոք յանձն առած էր, այս տարի ուղղակի գանձուելով՝ 2,200,000 զրուշ գոյացած է։

ՊԱՂՋԷՐԼՈՅԻ մօտ Թօքուդլու ջրամբարը վնասուած ըլլալով, չորս կանգուն բարձրութեամբ ջուրերն յանկարծ պարպուեր են։ Էվգաֆի նախարարութիւնը ձեռնարկած է այդ ջրամբարին նորոգութեան։

ԳՕՆԵԱՒ երկաթուղւոյն շինութեանն առթիւ հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնք կը հաղորդուին։ Նահանգին քնակչոյ թիւը մէկ միլիոնի կը հասնի։ Գոնեաի քաղաքին մէջ 50,000 բնակիչք կան, որոց 46,000 ն խլամ են, 2000 ը հայ, 1,500 ը յոյն և մնացեալներն հրեայ ու եւրոպացի։ Նահանգին հողերու մեծ մասը արգասաբեր է, մանաւանդ Գոնեաի դաշտն, որ տասն առ հարիւր համեմատութեամբ մշակուած է։ Ցայտնի է թէ փոխադրութիւնք դիւրանալով՝ այդ դաշտ ամբողջովին պիտի մշակուի։ Այս դաշտին մէջ յառաջ կուգայ Տէվէ Տիշի կոչուած խոշոր հատիկով ցորենն, որ խիստ համեղ է։ Նահանգին ամեն կողմը ամեն տեսակ հունձքեր կը հասնին։ Բազմաթիւ այգիներ կան և խաղողները խիստ առատ են և ընտիր տեսակէ։ Նահանգին մէջ կան Անթալիա, Սբարթա, Ալաիէ, Գաբաման, Նիկոէ, Պօր, Ագշէհր ու Սէյտի Շէհր քաղաքներն և բազմաթիւ գիւղեր՝ խրաքանչիւրը 600, 500 ու 400 և ամենէն փոքրը 150 տուներով։ Թուզ կէօլի անուն լիճէն հանուած աղն առատ ու ընտիր տեսակէ է։

Կը խնդրենք մեր բոլոր Աղթակիցներէն ու աշխատակիցներէն որ հրատարակութեան համար զրկուած յօդուածներն ու նամակները Աղթին մէկ երեսին վրայ միայն գրեն, տպարանական դիւրութեան համար։

Հրատարակուեցաւ ՍՐԲՈՒՅԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍԹԱՆԻՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆ ի Գրիգոր Մարգարեանէ, մայրապետին լուսանկար պատկերով։ Գիրքին հասոյթովը շիրիմ մը պիտի կանգնուի բարեշիշատակ կնոջ գերեզմանին վրայ։ Այս նպատակ զրկիր մըն է որ ամեն մարդ գնէ սոյն զրքոյկէն։ Կերրոնատպին է Զարդարեան գրատունը, կը գտնուի նաեւ ամեն գրավաճառաց քով։ Որքանոն 5ին կնիքը չկրող օրինակներն անվաւեր են։ Գին 5 զրուշ։ 393 18—20

ՀԵՌԱԳԻՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՇԳՈՒԹԿԱՐԴ, 27 Փետր · —Արեւելեան սրընթաց կախարդումն որ Փարիզէ Վիեննա կ'երթար, ճամբէն չեղեցաւ, բայց մարդու վնաս չեղաւ։

ՎԻԵՆՆԱ · —Ֆրանց Եոզէֆ Կայսր, իւր աղջկան այցելէ յետոյ, Թրիէսդէ դնաց, ընդ առաջ Կայսրուհւոյն, որ Միջերկրականի մէջ իւր ուղեւորութենէն կը դառնայ։

—Զարին մեծ արարողապետ Տոկտորովքի իշխան Վիեննա եկաւ։

ՓԱՐԻԶ · —Շան-տը-Մառսի «Մէքենայից Պալատան» մէջ Պ · Պ. Ֆէռուլ և Քոռ հեծելանիւով մրցում մ'ըրին 1,000 քիլոմէթրի վրայ, ուրաքի երեկոյ ժամ 10ին սկսելով կիրակի ժամ 4ին վերջացնելու պայմանաւ։ Պ. Ֆէռուլ յաղթեց, իւր հակառակորդէն 10 քիլոմէթր յառաջ վերջացնելով 1,000 քիլոմէթրը։

—Երեսփ. Ժողովն աւարտեց երմտացոյցի վիճաբանութիւնը։

ՊՐՈՒՍԷԼ · —Քոնկոյի Պետութեան լուր եկաւ թէ պելժ հազարապետ մը Քոնկոյի ներսերը կռուեր է Թիբու-Թիբի որդւոյն հրամանաց ներքեւ գտնուող ընիկներուն հետ, որք յաղթուեր են։

Վակտրան

ԶԱՒԱԹԻԱ, 16 Փետրուար

ԼՒԹԱՑԻ ՓՈԽԱՆԱԿԱՒՈՒ

3 ամիս Լոնտրայի վրայ	110 ½
3 » Փարիզի »	22 72½

ՕՍՄԱՆԵԱՆ ՔՈՆՍՈԼԻՏԷ

Երէկ երեկոյ զոց. (Միաց. Դ · Սէրի)	24 21
Բիրայի մէջ	— —
Առաւօտուն բացուելացաւ	24 21½
Ամբ օրին	24 23½
Թանվիլաքը Օսմանիյէ երէկ երեկոյ	84 30
» » ժամ 3ին	— —

ԸՆԹԱՑԻ ԱՐԺԵԹՂԹՈՒ

Փխա Թիւն	Ա · Սէրի	56 ¼
»	Բ. »	32 ¾
»	»	24 21½

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիէթէ ժէնէրալ	Անգլ. Լր.	5 14
Քրէտի ժէնէրալ	» »	7 38
Պանք տը Քոնս.	» »	4 30
Գօս. Շանժ է վալ. օր.	» »	4 30
Ռէժի	» »	16 32
Թրամուէյ	» »	597 ½
Բուսմէլիի երկաթուղի	ֆր.	93 ½
Բաժնեթուղթ Լաբիսսի		67

ԸՆԹԱՑԻ ԴՐԱՄՈՎ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանկնոց	»	88 03
Անգլիական ոսկի	»	110 12
Մարք Գերմանական ոսկի	»	107 20
Իմպէրիալ	»	90
Քրիմիոց	»	51 15
Բուպլ Քաղաքական	»	8 56
Մէջ. արծաթ (տարբ.)	»	198 02
Մանր արծաթ	»	103 10
Մէճիտիէ	»	97
Թասֆիյէ	»	49
Տոկտոր Զարեմիոյ Սակարանի	»	6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 27 Փետրուար

Ֆրանսական Ռանթ 3 %	98 32
» » 4½ %	105 72
Օսմանեան քոնսոլիտ Սէրի Դ.	22 20
Օսմ. մարս. արժեթուղթ	468 12
Բրիօրիթէ Թիւրք (1890)	440 62
Օսմանեան երկաթուղի	93 37
» Բէժիի բաժնեթուղթեր	376 87
Պանք Օթօման	585 93
Քրէտի Լիոնէ	775
Իտալական Ռանթ 5 %	92 90
Եգիպտական միացեալ	502 50
